hip culture

ANDREÏ MAKINE

L'AMI ARMÉNIEN

roman

ԱՆԴՐԵՅ ՄԱԿԻՆ

վեպ

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Աննա Բաղդասարյանի

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 821.133.1-31 Մակին
ԳՄԴ 84(4Ֆր)-44
Մ 182

Մակին Անդրեյ
Մ 182 Իմ հայ ընկերը: Վեպ / Ա. Մակին; Թարգմանությունը ֆրանսերենից՝ Ա. Բաղդասարյանի.- Եր.: Newmag, 2023.- 144 էջ:

Սիբիր, 1970-ականների սկիզբ: Պատմությունը պատմող 13-ամյա որբ տղան խուլիգանների հաշվեհարդարից փրկում է Վարդան անունով մի տղայի, ինչի պատճառով ենթարկվում է իր հայրենակիցների հարձակմանը: Դեպքը տեղի է ունենում դպրոցի բակում: Այդպես ծնվում է ընկերությունը: Նրանք գնում են Վարդանի տուն, և որբ տղան հայտնվում է հայկական ընտանիքների աշխարհում: Այդ ընտանիքներն ապրում էին մի բանտի մոտ, որտեղ պահվում են նրանց ամուսինները, որդիներն ու հայրերը: Հենց այստեղ է որբ պատանին առնչվում խիզախության, սիրո ու արժանապատվության հետ. երևույթներ, որոնք խորը հետք են թողնում նրա ամբողջ կյանքի վրա:

«Իմ հայ ընկերը» կախարդում է իր բազմաշերտ նոստալգիայով. մեկուսացված հայկական համայնքի՝ հայրենի երկրի մասին հուշերը միահյուսվում են երիտասարդ տղայի՝ մանկության ընկերոջ մասին հիշողություններին:

ՀՏԴ 821.133.1-31 Մակին
ԳՄԴ 84(4Ֆր)-44

ISBN 978-9939-967-06-6
Անդրեյ Մակին «Իմ հայ ընկերը» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
Andreï Makine «L'ami Arménien» © Editions Grasset & Fasquelle, 2021
Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Grasset & Fasquelle ընկերության հետ կնքած պայմանագրով:

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքը ձեռք է բերվել հեղինակի հետ կնքված պայմանագրով:

Բովանդակություն

Գլուխ I 9

Գլուխ II 33

Գլուխ III 53

Գլուխ IV 69

Գլուխ V 83

Գլուխ VI 105

Գլուխ VII 127

Գլուխ VIII 133

Դոմինիկ Ֆերնանդեսին

I

«Նա սովորեցրեց ինձ լինել ինձնից տարբեր»:

Երիտասարդ տարիներին այսպես էի արտահայտում այն, ինչ բացահայտեցի Վարդանի հետ հանդիպման շնորհիվ. առեղծվածայինն ու պարադոքսալը՝ աշխարհի կարուսելի հետևում թաքնված:

Այժմ դրանում տեսնում եմ ոչ թե մութ հանելուկներ ու զարմանալի պարադոքսներ, այլ այս պարզ ճշմարտությունը, որն ի վերջո հասկացել եմ նրա շնորհիվ. մենք համակերպվում ենք մեր իրական էությունը չփնտրելու մտքին, ու դա մեզ սպանում է մահից շատ ավելի վաղ՝ խռովահույզ բառակույտերի մի ստվերախաղում, որը համարվում է մեր միակ հնարավոր կյանքը: Մեր կյանքը:

Այդ երեկո խոսում էր հանգիստ ու անշտապ: Ձայնը գալիս էր հեռու հեռվից թուլացած արձագանքի նման: Իր սովորական ձայնն էր, թեպետ ասածը կարծես անհեթեթություն էր: Կամ էլ գուցե ինձ էր ծաղրում: Մեր ընկերության սկզբում երբեմն այդ զգացումն էի ունենում:

— Կուզեմ երկնքին դիպչեմ: Այ այսպես՝ մատներով...

Քրքջալով տարուբերեցի գլուխս: Վարդանը ձեռքը բարձրացրեց ու մի քանի վայրկյան քարացավ, որ ընտելանամ իր ճշմարտությանը: Տեսնելով, որ այդպես էլ ոչինչ չհասկացա՝ բացատրեց: Ու չկարողացավ քողարկել զարմանքը, քանի որ դա անհավանական էր թվում նրան:

— Այստեղ՝ մեր բարձրության վրա, ճիշտ նույն օդն է, ինչ ամպերի մեջտեղում, չէ՞: Այսինքն՝ երկինքը սկսվում է ա՛յ այստեղից և նույնիսկ ավելի ներքևից՝ գետնի մոտից: Ստացվում է՝ մեր կրունկի տակից:

Վարդանի դատողությունից շփոթված՝ քիչ էր մնում հիշատակեի մթնոլորտային շերտերի տարբերությունները, դրանց աստիճանական դասավորվածությունը, որ սովորում էինք բնագիտության դասերին, ամպերի բոլոր տեսակները՝ փետրավորը, անձրևաձնաբերն ու բարձրակուտակը...

Բարեբախտաբար, չհակադարձեցի նրան, և մեր կարճատև լռության շնորհիվ այդ րոպեներն անաղարտ մնացին իմ հիշողության մեջ՝ բազմագիտակության խոսքային հնարքներից զերծ: Ցածր արև, օգոստոսյան վերջին օրերի անդորր, սաղարթների թափանցիկ ոսկեզօծում, երկինք, որ դեռ պահպանում էր ուշ ամառվա թավիշը, ու այդ պատանեկան ձեռքը, մատները, որ սավառնում էին կապույտի մեջ՝ օդանավի սպիտակ հետագծերի արանքում: Եվ մեր երիտասարդ շունչը, որ կտրվում էր խոնարհ ու գլխապտույտ հայտնության սահմանեզրին:

Մեծանալով կռահելու էի այդ ժեստի իրական նշանակությունը: Վարդանն ինձ ստիպում էր բացահայտել շատ ավելին, քան մթնոլորտային զվարճալի հետաքրքրասիրության հարուցած զարմանքը: Նա խոսում էր մի նոր գոյության

մասին՝ չկարողանալով հստակ սահմանել այն, որտեղ մեր միտքը փախչում էր այս աշխարհի կարգուկանոնից ու մեզ հրամցնում ապրելու և տեսնելու մեկ այլ ձև: Մեր բանականությունն իր բռի իրատեսությամբ հակադրվում էր դրան, բայց ներքուստ՝ ինչ-որ խորհրդավոր մղումով, միայն մի բան էինք տենչում՝ կարողանալ ընկղմվել մեր ոտքերի տակ բացված երկնային թեթևության մեջ:

Ամեն դեպքում, այդ երկինքը, որ թեթևակի դիպչում էր ծխախոտի մնացորդներով, ցեխի ու թքի հետքերով ծածկված գետնին, տպավորիչ էր նույնքան, որքան Կոպեռնիկոսի կամ Գալիլեոյի մտքի փայլատակումները: Ավելին, այդ աստվածացված բարձունքը, որ փառաբանվում է բոլոր կրոններում, դադարեց անհասանելի թվալ որպես գերագույն աշխարհ ու խառնվեց մահկանացուներիս շնչառությանը: Այդուհետև, մտածելով Աստծո մասին, պատկերացնելու էի նրա ներկայությունը. անսահմանորեն ավելի մոտ էր մեզ ու շատ տարբեր՝ աստվածության մեծամիտ լևիտացիայից, որը պաշտում և որից վախենում են մարդիկ:

Իմ հուշերում օգոստոսյան այդ երեկոյի մեր լուռ խորհրդածության ակնթարթը ստեղծելու էր օդեղեն երփնապակի՝ միաժամանակ փութանցիկ ու մնայուն, որն ընդվզելու էր մոռացության համառ ձգտման դեմ, ինչին անտրտունջ համակերպվում ենք ի վերջո:

Շատ տարիներ անց հասկանալու էի նաև, որ Վարդանի պատանեկան բարալիկ թևի շարժման շնորհիվ անգիտակցաբար սովորելու էի հասկանալ այն կանանց փխրունությունը, որոնց սիրելու էի: Այո՛, այդ մարմինները, որոնց սպառնում է տարիքը, հոգիները, որոնք շրջապատված են գռեհկու-

թյամբ, խոստովանությունները, որոնք գոյության միաձույլ որոշակիությունների առաջ դատապարտված են լռության:

Երկնքին դիպչող այդ ձեռքը դառնալու էր հուսալու գաղտնի պատճառ:

Մյուս բացահայտումը, որի համար ևս պարտական եմ Վարդանին, ավելի հուզիչ էր: Այդուհանդերձ, ինչ-որ առումով նման էր այն հպարտ երկնակամարի վայրէջքին, որն արժանացավ մեր ձեռքերի հպմանը...

Մի հարբած կին էր անցնում երկաթուղու լաբիրինթոսով. ռելսերը միահյուսվում, երկճեղքվում, կորչում էին քամոտ ու մռայլ օրվա մանրամաղ անձրևի տակ: Ալկոհոլից շշմած՝ սայթաքեց, փորձեց պահել հավասարակշռությունը և այդ ծիծաղելի երկայնաձոճում ծաղրի առարկա չդառնալ: Ի վերջո, ասես զգալով, որ իր համար ամեն ինչ մեկ է՝ սահեց ձյութապատ ճանապարհի վրա, ապա ճկվեց, կորացավ ցավից կուչ եկած թռչնի պես:

Մեր առջևից գծանցով քայլող երկու տղամարդիկ հայացքները հառեցին կնոջը, քմծիծաղ տվեցին, և նրանցից մեկը բղավեց.

— Հե՛յ, ա՛յ Աննա Կարենինա, դե՛մդ նայիր: Մոսկվա-Իրկուտսկ գնացքը հիմա կգա:

Մյուսը ծաղրանքով ու արհամարհանքով նետեց.

— Տո չէ հա՛, մինչև հասցնի քամակը շարժել, կսթափվի: Էդ գնացքը հազիվ երեք ժամից հասնի...

Նրանք շարունակեցին իրենց ճանապարհը: Հնչեցին որոշ անպարկեշտ մեկնաբանություններ՝ միախառնված ծիծաղի պոռթկումներին ու սուլոցներին, որոնցով այդ երկու ընկերները փորձում էին կրկնօրինակել գնացքի մուտքը կայարան:

Լսեցի նրանց ծաղրանքների մի պատառիկ, որն արտաբերվեց ավելի խուլ ձայներանգով, և այնտեղ որսացի ոչ միայն արհամարհանք, այլև արգելված բուռն ցանկության արտահայտություն, տատանում՝ այդ կնոջ մարմնի գրավչության և այն որոգայթների միջև, որոնք թվարկում էին քողարկված բառերով, որոնց ենթատեքստն անկարող էի ըմբռնել: Այսպես, վերջին խոսքը, որ հնչում էր շատ ավելի գրգռված ու զարմանալիորեն դյուրաբորբոք, վերաբերում էր այդ կնոջ շրթունքներին՝ ներկված վառ կարմիրով, որն անփույթ շրջանցում էր բերանի եզրագիծը, ասես ներկի կամ արյան հետք լիներ:

Այդ երկու տղամարդկանց ասածների անպատկառությունը, գռեհկությունը թույլ չէին տալիս հասկանալ, թե ինչ են իրականում ակնարկում: Միայն կռահում էի, որ կնոջ կիսաբաց բերանն արտացոլում էր նրանց բուռն ցանկությունը՝ անհագուրդ, բայց և անհարմար:

Այդ ժամանակ տասներեք տարեկան էի: Վարդանը, որ ավելի ցածրահասակ էր, ինձնից մի տարի մեծ էր: Կարծում եմ՝ այդ տարիքում պիտի որ առանձնապես անտեղյակ չլինեինք սեռական կյանքի մանրամասներին: Հատկապես որ, ապրելով մանկատանը, շփվում էինք մեզնից մեծ, երիտասարդ տղաների ու աղջիկների հետ, որոնք սկսում էին մարմնական կապեր ունենալ. բնականաբար գաղտնի, բայց առանց ավելորդ բարդույթների: Խոսում էին այդ մասին անպարկեշտ պարծենկոտությամբ և հաճախ՝ հիմար չափազանցությամբ, ինչն էլ պատկերացումների գիրկն էր գցում իմ հասակակիցներին:

Այդուամենայնիվ, ինձ համար սիրահարների աշխարհը շարունակում էր պահպանել իր անաղարտ ու արխայիկ

ռեզոնանսը. աշխարհ՝ կառուցված աննկարագրելի ցնորքներով, համակված անուրջներով և բուռն կրքից եռացող զգացմունքայնությամբ: Այս պատկերն ավելի հստակ էր ուրվագծվում հատկապես երկար սպասված ու բաղձալի առաջին համբույրի մասին մտածելիս:

Այդ օրն ինձ ապշեցրեց այն, թե ինչպես սերը և այդ առաջին համբույրի մաքրամաքուր սպասումը երկաթուղու գծանցի թաց տախտակներին ուղղակիորեն նվազեցին՝ դառնալով գռեհիկ գործածության առարկա, չոր ֆիզիոլոգիա, որն իր զզվելի ու անտաշ մեխանիզմով խոցեց հոգիս: Այդ երկու տղամարդկանց համար սեռական բավարարման տվյալ ձևը կարծես թե լիովին ընդունելի և նույնիսկ սովորական էր, չնայած ասոցացվում էր որոշակի տհաճությունների հետ՝ հաշվի առնելով փնթիությունն ու այն հավանական հիվանդությունները, որոնց կարող էին բախվել այդ կարգի կնոջ հետ հարաբերվելիս: Ինչ-որ բան հստակ վկայում էր, որ նրա՝ առատորեն շպարված բերանը կարող էր ծառայել որոշակի սեռական տեխնիկայի ու դառնալ կենցաղային անցք՝ արական ցանկասիրության զետեղարան:

Զգացի, թե ինչպես է մեջս մեռնում իմ նախկին ես-ն ու միաժամանակ ձևավորվում այն մեկը, որը պիտի ծնվեր: Ապագա տղամարդն արթնանում էր իմ մեջ՝ ձգելով մկանները, փքեցնելով իրանը: Երբեմնի երազկոտ մանուկը ստիպված էր տեղը զիջել նրան, ինքն իրեն մերժել, արհամարհել երազների ծիծաղելի մաքրությունն ու անհետանալ: Ափսոսանքի մի ուժգին զգացում հանկարծ սեղմեց շնչառությունս: Նմանվելու էի այդ երկու բարձրահասակ անցորդներին, որոնք վստահ էին իրենց ուժեր վրա ու համոզված էին, որ իրավունք ունեին

այդ կարգի (ռելսերի մոտ ընկած կնոջ պես) կանանց նայել գիշատչի հաղթական հայացքով, որը մերժում չէր հանդուրժում: Ստամոքսս կծկվեց արական նոր ինքնության մեջ վերածնվելու գայթակղության առաջացրած ամոթալի ու ոգևորիչ խանդավառությունից:

Տղամարդիկ քմծիծաղելով հեռացան: Պատրաստվում էինք նրանց հետևից քայլել, երբ հանկարծ Վարդանը կանգ առավ ու սկսեց զննել կնոջը (ըստ իս՝ անհեթեթ սևեռվածությամբ): Մենք արդեն բավական մեծ էինք՝ հասկանալու համար, թե ինչ տեսակի կին էր մեր առջև: Նախկինում մի քանի անգամ նկատել էինք, թե ինչպես է երկաթգծի կանգառի ու ավտոբուսների կայանտեղիի միջև այսուայնկողմ անում, այնուհետև կայարանի բուֆետ սողոսկում ու տեղավորվում մի անկյունում՝ բարի մոտ: Միշտ նույն ճոխ դիմահարդարմամբ էր, թարթչաներկից ածխագունած կոպերով, գարեջրի փրփուրով հարդարված մազերով... Հիմա այստեղ՝ հատող ճանապարհին նստած, ծնոտը ձեռքի մեջ սեղմած (կարծես ատամների ցավը մեղմելու համար)՝ իրարից հեռացնում էր ծնկները՝ ի ցույց դնելով հատ գնացած ցանցավոր զուգագուլպան և նիհարիկ ազդրերը ատլասե կիսաշրջազգեստի տակ, որը չափազանց գունավոր ու ծաղկազարդ էր, նաև չափազանց թեթև՝ զով ու խոնավ հետմիջօրեի համար:

Անշուշտ, արդեն կարող էինք պատկերացնել, թե այդ մարմինն ինչ կառաջարկեր տղամարդկանց: Մեզ հասակակից դեռահասների պես հազիվ էինք թաքցնում այդ տղամարդկանցից մեկը դառնալու մեր անհամբերությունը: Ռելսերի մեջտեղում մոլորված կինն ամփոփում էր հասունացող առնականության մեր ամբողջ ծարավը, բայց նաև մեր

Ամբողջական գիրքը
կարող ես ձեռք բերել
bookmark.am
կայքում

Bookmark